ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1611-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1456-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգերի զինծառայողների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի փրկարարական ծառայողների պարենային ապահովության կարգը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի N 706 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1456-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 706 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման ամբողջ տեքստում «կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության» բառերը փոխարինել «ազգային անվտանգության ծառայության» բառերով.

3) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության ոստիկանության» բառերով.

4) որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառերով.

5) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Սահմանել, որ՝

1) ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության զինծառայողները պարենային ապահովություն չեն ստանում, իսկ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված դրամական միջոցներն ուղղվում են վերջիններիս իրային ապահովությանը.

2) ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության զինծառայողների

սննդի հետ կապված ծախսերի հաշվարկը կատարվում է օրական 3000 դրամի չափով, ամսական միջին ծանրաբեռնվածությունը՝ 16 օր, իսկ զինծառայողների թիվը՝ նախորդ տարվա փաստացի թվի միջինով:».

6) որոշման N 2 հավելվածի 1.1-ին և 1.2-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած.

7) որոշման N 3 հավելվածի վերնագրում և 1-ին կետում «կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության ոստիկանության» բառերով.

8) որոշման N 4 հավելվածի վերնագրում «արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառերով.

9) որոշման N 4 հավելվածի 1-ին կետում «արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «ներքին գործերի» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության ծառայության համակարգերի զինծառայողների, փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին» N 1457-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում «ԵՎ» բառը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) վերնագիրը «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերով.

3) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով՝

«2.1) Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության զինծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները)՝ համաձայն N 2.1 հավելվածի.».

4) որոշման 2.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 1456-Ն որոշման 1.1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ծառայողների իրային ապահովությանն ուղղվող դրամական միջոցները, որպես դրամական փոխհատուցում, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետի կողմից սահմանված համամասնությամբ տրամադրվում են սույն կետում նշված ծառայողներին:».

5) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ կետով՝

«2.2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ստորաբաժանումներում, ծառայության առանձնահատկություններից ելնելով, սույն որոշման N 2.1 հավելվածի համաձայն պարտադիր զինվորական հանդերձանք չկրող սպաներին և ենթասպաներին տրվում է դրամական փոխհատուցում՝ զինվորական հանդերձանքի ձեռքբերման գների հաշվարկով, իսկ զինվորական հանդերձանքի ձեռքբերումների բացակայության դեպքում՝ մրցակցային կամ շուկայական գների հաշվարկով, ըստ կրման ժամկետների:».

6) որոշումը լրացնել N 2.1 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման գործողությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության մասով, տարածվում է 2023 թվականի հունիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ